ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 18
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքը (Որոտան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Գորիս համայնքի (Որոտան բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքը (Որոտան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Սյունիք-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի (Որոտան բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
(09-077-0002 կադաստրային ծածկագրից) 0.6085 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր	(09-077-0002 կադաստրային ծածկագրից) 0.6085 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության բազմամյա տնկարկներ

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ապահովելով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գրությամբ տրամադրված «Գազպրոմ Արմենիա« ՓԲ ընկերության պահանջը (կցվում է)՝ «նշված հողակտորի եզրագծով անցնում է Գորիս-Կապան-Քաջարան Dպ-500մմ տրամագծով մայրուղային գազատարը: Համաձայն ՀՀ Կառավարության 16 հուլիսի 2015 թ. N 787-Ն «Գազի տնտեսությունում գազատարների և դրանց վրա գտնվող ինժեներական կառույցների անվտանգության գոտիների չափերի ու դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին»

որոշման պահանջների՝ գյուղատնտեսական նշանակության հողատարածքներում գազատարի անվտանգության գոտին սահմանազատվում է խողովակաշարի երկու կողմով՝ առանցքից 15 մետր հեռավորությամբ»:

4. Գորիս համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Որոտան բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի (Որոտան բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա.Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «13» «հունվարի» 2022 թ.